



CRRC
Armenia



EURASIA
PARTNERSHIP
FOUNDATION



Հրանտ Մաթևոսյան
HRANT MATEVOSSIAN FOUNDATION

Տնտեսական զարգացման և հեղափոխությունների կենտրոն

«Աղքատության նվազեցում համայնքներում. կիրառական մոտեցումներ» ծրագիր
Community Poverty Reduction “Know How” Project

«ՀԱՆՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ» *PUBLIC BUDGETS AND BUDGET PROGRAMME MONITORING*

Վերապատրաստման դասընթաց ԲՀԿ-ների համար
Օր - Առաջին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- **ՄԱՍ 1. Բյուջեպային գործընթաց: Պետական բյուջե**
- **ՄԱՍ 2. Բյուջեպային ծրագիր: Բյուջեպային ծրագրերի կառուցվածքը**
- **ՄԱՍ 3. Բյուջեպային ծրագիր: Ծրագրերի արդյունքային ցուցանիշների մշակում**

➤ ՄԱՍ 1. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ: ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ


ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

- Պետական քաղաքականության ձևակերպումն իրականացվում է հիմքում ունենալով գործող **ռազմավարական փաստաթղթերը**՝ ռազմավարություններ, հայեցակարգեր, ծրագրեր, ֆինանսական պլաններ:
- Զարգացման պլանավորումը և բյուջետավորման գործընթացները **մեկ միասնական համակարգ** են:
- Պետությունը (պետական բյուջեի միջոցով) ֆինանսավորում և իրականացնում է **զարգացման տարբեր ռազմավարություններ**: Դրանք իրականացվում են **բյուջետային ծրագրերի միջոցով**:
- **Բյուջետային ծրագրերը չեն կարող լինել** կտրված զարգացման ընդհանուր ենթատեքստից:
- **Բյուջետային ծրագրերը** պետք է հստակորեն արտահայտեն ռազմավարություններով սահմանված **ռազմավարական նպատակները և արդյունքները**:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ: ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

- Ընդգրկման, ժամկետայնությամբ և պետական ծախսերի վրա ազդեցության շրջանակներով պայմանավորված, ռազմավարական փաստաթղթերը դասակարգվում են.
- **Համապարփակ ռազմավարական փաստաթղթեր,**
Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050
- **Միջին մակարդակի ռազմավարական փաստաթղթեր,**
*Ոլորտային միջնաժամկետ կամ երկարաժամկետ ռազմավարություններ, օրինակ՝
ՀՀ բնական պաշարների կառավարման ռազմավարություն*
- **Բյուջետային ծրագրերի ռազմավարություններ:**
*Բյուջետային ծրագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող ռազմավարություններ, օրինակ՝
Փոքր և միջին ջերմամատակարարության տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիր*
- **ՀՀ կառավարության ծրագիր և ՄԺԾԾ**

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ: ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- **ՀՀ բյուջետային համակարգը** երկու մակարդակի բյուջեների ամբողջություն է՝
 - ա) առաջին մակարդակ՝ **պետական բյուջե**,
 - բ) երկրորդ մակարդակ՝ **համայնքների բյուջեներ**:

- **Պետական և համայնքի բյուջեները**՝ պետությանը և ՏԻՄ-երին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրեր են:
(«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 1)

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ


- **Բյուջետային գործընթացը՝** յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեությունն է:

- Բյուջետային գործընթացը կարգավորվում է՝
 - ՀՀ Սահմանադրություն
 - ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենք
 - ՀՀ պետական բյուջեի մասին օրենք
 - ՀՀ տեղական ինքնակառավարման մասին օրենք
 - ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

- Հայաստանի Հանրապետությունում բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա **հունվարի 1-ից** և ավարտվում նույն տարվա **դեկտեմբերի 31-ին**:
- Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործընթացը սկսվում է **ՀՀ վարչապետի** կողմից առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշման **ընդունման օրը** և ավարտվում՝ տվյալ տարվա **բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու օրը**:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՑԻԿԼ



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայտատու մարմինների կողմից իրենց 2023-2025թթ ՄԺԾԾ, ներառյալ 2023թ. ՀՀ պետական բյուջեի հայտերի (այսուհետ՝ հայտեր) մշակում և ներկայացում ՀՀ ՖՆ	մինչև մարտի 15, 2022թ.
Հայտատու մարմինների կողմից ՀՀ ՖՆ ներկայացված հայտերի հրապարակում հայտատու մարմինների ինտերնետային կայքերում	մինչև մարտի 15, 2022թ.
Հայտերի շուրջ ՔՀԿ-ների հետ քննարկումների անցկացում և արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ՖՆ	մինչև ապրիլի 8, 2022թ.
Հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացում (ըստ անհրաժեշտության)	մինչև մայիսի 13, 2022թ.
ՀՀ վարչապետի մոտ կայացած քննարկման արդյունքներով ավարտուն տեսքի բերված հայտերի ներկայացում ՀՀ ՖՆ	մինչև մայիսի 24, 2022թ.
ՀՀ կառավարության կողմից ՄԺԾԾ նախագծի քննարկում և հաստատում	մինչև հունիսի 9, 2022թ.
ՀՀ ԱԺ գլխադասային հանձնաժողովներում քննարկումների անցկացում հայտատու մարմինների և ՀՀ ՖՆ մասնակցությամբ	մինչև հուլիսի 29, 2022թ.
ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկում և այն ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու մասին որոշման ընդունում	մինչև սեպտեմբերի 30, 2022թ.
«ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակված տարբերակի և հանրային քննարկումների ամփոփաթեթերի տեղադրում ՀՀ ՖՆ կայքում	ՊԲ նախագիծը ԱԺ ներկայացնելու հաջորդ օրը
«Քաղաքացու Բյուջե»-ի մշակում և հանրայնացում	ՊԲ մասին օրենքի հրապարակումից հետո 1 ամսյա ժամկետում

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

■ Պետական բյուջեի ծախսերը ներկայացվում են հետևյալ դասակարգումներով.

- **Տնտեսագիտական**
- **Գերադասչական**
- **Գործառական**
- **Ծրագրային**

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

- Բյուջեի **տնտեսագիտական դասակարգումը** ցույց է տալիս, թե հանրային ծառայությունների արտադրության համար ինչ տեսակի ռեսուրսներ են օգտագործվում:
- Համաձայն տնտեսագիտական դասակարգման բյուջեի ծախսերը դասակարգվում են՝
 - **Ընթացիկ ծախսեր**
 - Աշխատավարձ
 - Տոկոսավճար
 - Տրանսֆերտներ
 - Ապրանքների և ծառայությունների ձեռք բերում
 - **Կապիտալ ծախսեր**

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

- Բյուջեի **գերատեսչական դասակարգումը** խմբավորում է բյուջեի ծախսերն ըստ պատասխանատվության բաշխման, այսինքն՝ ցույց է տալիս, թե որ գերատեսչությունն է պատասխանատու հանրային այս կամ այն բարիքների արտադրության և միջոցների օգտագործման համար:
- Օրինակ՝
 - ՀՀ վարչապետի աշխատակազմ,
 - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,
 - ՀՀ կադաստրի կոմիտե:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

- Բյուջեի **գործառական դասակարգումը** ցույց է տալիս, թե հանրային հատվածի հիմնական գործառույթների (ֆունկցիաների) համար հանրությունը որքան ռեսուրս է տրամադրել:
- Առանձնացվում են հետևյալ գործառական ուղղությունները/բաժինները՝

01	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ
02	Պաշտպանություն
03	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն
04	Տնտեսական հարաբերություններ
05	Շրջակա միջավայրի պաշտպանություն
06	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն
07	Առողջապահություն
08	Հանգիստ, մշակույթ և կրոն
09	Կրթություն
10	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

- Բյուջեի **ծրագրային դասակարգումը** խմբավորում է հանրային հատվածի ծառայություններն ըստ որոշակի նպատակների:
- **Ծրագրային բյուջեն** ցույց է տալիս, թե ինչ արդյունքներ ձեռք կբերվեն բյուջետային ծրագրերն իրականացնելիս և ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ ռազմավարական ծրագրի արդյունքների ձեռքբերման համար:
 - Ի՞նչ արդյունքներ ձեռք կբերվեն,
 - Ի՞նչ ազդեցություն կլինի հասարակության վրա,
 - Ի՞նչ ազդեցություն կլինի շահառուների վրա,
 - Որքա՞ն գումար կծախսվի տվյալ ծառայությունը մատուցելու և տվյալ նպատակին հասնելու համար:

➤ ՄԱՍ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ: ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

- Բյուջետային ծրագրերը **կապող օղակ** են հանդիսանում քաղաքականության և բյուջետավորման համակարգի միջև:
- Բյուջետային ծրագրերը հանդիսանում են պետական քաղաքականությունը սահմանող ՀՀ օրենքների և ռազմավարությունների իրականացումը և համապատասխան նպատակների ձեռք բերումը ապահովող **բյուջետային գործիքներ**:
- Բյուջետային ծրագիրը պետության **կոնկրետ նպատակի** իրագործմանն ուղղված միմյանց հետ փոխկապակցված միջոցառումների համախումբ է:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

- **Բյուջետային ծրագիրը պետք է հստակ կապված լինի քաղաքականության որևէ նպատակի/վերջնական արդյունքի հետ.**
 - *Օրինակ՝ «Գյուղատնտեսության խթանման ծրագիրը» նպաստում է գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացում:*
- **Միևնույն ծրագրում պետք է ներառվեն տվյալ նպատակին կամ վերջնական արդյունքին ուղղված պետության կողմից իրականացվող բոլոր միջոցառումները:**
 - *Միևնույն ծրագրում կարող են ներառվել ծառայություններ, տրանսֆերտներ, ինչպես նաև ցանկացած այլ տիպի միջոցառումներ:*

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

- Ծրագրի անվանումը
- Ծրագրի նպատակը
- Ծրագրի դասիչը
- Ծրագրի արդյունքային ցուցանիշները
- Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները
- Ծրագրի գծով ծախսերը
- Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմինը

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

- **Ծրագրի անվանումը** հանդիսանում է բյուջետային փաստաթղթերում ներկայացվող ծրագրի պաշտոնական անվանումը:
- **Ծրագրի անվանումը** առաջին հայացքից ընդհանուր պատկերացում է տալիս ծրագրի նպատակի վերաբերյալ և արտահայտում է ծրագրի էական կողմը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

- **Ծրագրի նպատակը** արտահայտում է, թե ինչ կոնկրետ սոցիալական կամ հասարակական խնդիր է լուծվում ծրագրի իրականացմամբ:
- **Ծրագրի նպատակի** հասանելիության չափման համար սահմանվում են վերջնական արդյունքներ:
- **Ծրագրի նպատակը** պետք է լինի լինի իրագործելի և իրատեսական:
- **Օրինակ՝**
 - *Օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը*
 - *Ոչ վարակիչ հիվանդությունների բուժման արդյունավետության բարձրացում*
 - *Ոռոգման ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովում*

ԾՐԱԳՐԻ ԴԱՍԻՋԸ

- **Ծրագրի դասիչը** ծրագրի նույնականացման համար կիրառվող քառանիշ թվային կոդ է (օրինակ՝ «1057»), որը եզակի է յուրաքանչյուր առանձին ծրագրի համար:
- Ծրագրի դասիչը կայուն է ժամանակի ընթացքում, այն չի փոխվում տարիների ընթացքում և չի կրկնվում:
- Ծրագրի ավարտից հետո ծրագրի դասիչը չի տրամադրվում որևէ այլ նոր ծրագրի:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆԸ

- Ծրագրի իրականացման համար **պատասխանատու մարմին** է հանդիսանում ծրագրի շրջանակներում ֆինանսական միջոցների ծախսման և սահմանված արդյունքների ձեռք բերման համար պատասխանատու պետական մարմինը:

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- **Ծրագրի միջոցառումները** ծրագրի շրջանակներում պետության քաղաքականության իրագործման նպատակով իրականացվող պետության միջամտություններն են, որոնք ուղղված են տվյալ ծրագրի նպատակի իրագործմանը:
- Ծրագրի շրջանակներում կարող են իրականացվել տարբեր բնույթի միջամտություններ՝ ծառայությունների մատուցում, ապրանքների կամ տրանսֆերտների տրամադրում և այլն:
- Օրինակ, «Ճանապարհային անվտանգության ապահովման ծրագրի» շրջանակներում ճանապարհային ոստիկանության կողմից կարող են իրականացվել մի շարք միջոցառումներ՝ ներառյալ տրանսպորտային միջոցների պետական հաշվառումը, վարորդական իրավունքների տրամադրումը, ճանապարհային երթևեկության անվտանգության կազմակերպումը և այլն, որոնք ուղղված են ճանապարհատրանսպորտային պատահարների և դրանց արդյունքում մարմնական վնասվածքների և մարդկային զոհերի նվազեցմանը:

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- Միևնույն ծրագրի շրջանակներում պետք է ներառվեն տվյալ նպատակին կամ վերջնական արդյունքին ուղղված բոլոր տիպի միջոցառումները, անկախ ծախսերի բնույթից (ընթացիկ, կապիտալ և այլն):
- Բյուջետային հատկացումները և արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշները սահմանվում են հենց ծրագրի միջոցառումների մակարդակում:
- Միջոցառումները հանդիսանում են բյուջետային հատկացումների սահմանման, բյուջեի կատարման և հաշվետվողականության հիմքը:

ԾՐԱԳՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԸ

- **Ծրագրի գծով ծախսերը** տվյալ ծրագրի շրջանակներում ընդգրկված միջոցառումների իրականացման համար կատարվող բոլոր ծախսերն են:
- Ծրագրի գծով ծախսերը տվյալ նպատակին ուղղված բոլոր ծախսերն են:
- Ծրագրի գծով ծախսերը հանդիսանում են տվյալ ծրագրի միջոցառումների գծով ծախսերի պարզ հանրագումար:

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

- ▶ Միջոցառման անվանումը
- ▶ Միջոցառման նկարագրությունը
- ▶ Միջոցառման դասիչը
- ▶ Միջոցառման շահառուները
- ▶ Միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշները
- ▶ Միջոցառումն իրականացնող մարմինը

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ և ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- **Միջոցառման անվանումը** բյուջետային փաստաթղթերում ներկայացվող միջոցառման պաշտոնական անվանումն է:
- Միջոցառման անվանումը առաջին հայացքից ընդհանուր պատկերացում է տալիս պետության միջամտության ձևի վերաբերյալ և արտահայտում է միջոցառման էական կողմը:
- **Միջոցառման նկարագրությունը** նկարագրում է տվյալ միջոցառման հիմնական առանձնահատկությունները:

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԴԱՄԻՉԸ

- **Միջոցառման դասիչը** դա ծրագրի միջոցառման նույնականացման համար կիրառվող հնգանիշ թվային կոդ է (օրինակ «11001» կամ «31002»):
- Միջոցառման դասիչը՝
 - ունիկալ է յուրաքանչյուր ծրագրի շրջանակներում ներառված յուրաքանչյուր միջոցառման համար,
 - եզակի է միայն կոնկրետ ծրագրի շրջանակներում,
 - հետագայում չի կարող տրամադրվել տվյալ ծրագրի շրջանակներում իրականացվող որևէ այլ նոր միջոցառման:

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ և ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆԸ

- **Միջոցառման շահառուները** արտաքին միավորներ հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձինք են՝ կամ դրանց որոշակի խմբեր, որոնց կարիքների բավարարմանն անմիջականորեն ուղղված են միջոցառման շրջանակներում մատուցվող ծառայությունները կամ այլ միջամտությունները:
- **Միջոցառումն իրականացնող մարմինը** դա պետական կառավարման այն միավորն է, որն անմիջականորեն իրականացնում է միջոցառումը (օրինակ՝ ծառայության մատուցումը):

ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԻՉՆԵՐԸ

Միջոցառման բնույթը	Միջոցառման դասիչը	Միջոցառման տեսակը
Ընթացիկ միջոցառումներ	11xxx	Ծառայությունների մատուցման միջոցառումներ
	12xxx	Տրանսֆերտների տրամադրման միջոցառումներ
	13xxx	Ֆինանսավորման ծախսերի իրականացման միջոցառումներ
Կապիտալ միջոցառումներ	21xxx	Հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումներ
Հանրային սեփականության կառավարման միջոցառումներ	31xxx	Պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ
	32xxx	Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ
Ֆինանսական ակտիվների կառավարման միջոցառումներ	41xxx	Պահուստային հիմնադրամների (ֆինանսական պահուստների) ստեղծում
	42xxx	Վարկերի տրամադրում
	43xxx	Վարկերի մարում
	44xxx	Բաժնեմասերի ձեռք բերում
	45xxx	Փոխառությունների մարում և այլ ելքեր (ներքին)
	46xxx	Փոխառությունների մարում և այլ ելքեր (արտաքին)

ԸՆԹԱՅԻԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- **Ծառայությունների մատուցման** միջոցառումները հանդիսանում են պետական մարմինների կողմից կամ նրանց անունից հանրությանը մատուցվող ծառայություններ, որոնք սպառվում են արտաքին շահառուների կողմից:
- **Տրանսֆերտները** պետության կողմից հանրությանը տրամադրվող օժանդակությունն է՝ անվճար ապրանքների կամ դրամական միջոցների տրամադրման միջոցով:
- **Ֆինանսավորման ծախսերը** ներառում են պետական պարտքի սպասարկման (տոկոսավճարների) գծով պետական բյուջեից իրականացվող ծախսերը, այդ թվում և վարկերի տոկոսագումարների վճարումը:

ԿԱՊԻՏԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- **Հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների** հետ կապված միջոցառումները ներառում են այն ոչ ֆինանսական ակտիվների հետ կապված գործառնությունները (ակտիվի կառուցում, ձեռքբերում, բարելավում և այլն), որոնք անմիջականորեն օգտագործվում են հանրության անդամների կողմից:
- *Օրինակ՝ ընդհանուր օգտագործման ճանապարհները, կամուրջները, հուշարձանները, պատմամշակութային արժեքները, անտառները և այլն:*

ՀԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- **Հանրային սեփականության կառավարման միջոցառումները** ներառում են հանրությանը տրամադրվող ծառայությունների արտադրության նպատակով անմիջականորեն կիրառվող/սպառվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (ակտիվի կառուցում, ձեռքբերում, բարելավում և այլն):
- Հանրային սեփականության կառավարման միջոցառումները հանդիսանում են կապիտալ բնույթի միջոցառումներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Հանրային սեփականության կառավարման միջոցառումները տարանջատվում են՝ ըստ հետևյալ տեսակների.
- **Պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ** – հանրային սեփականություն հանդիսացող այն ակտիվների հետ գործառնությունները, որոնք անմիջականորեն օգտագործվում/սպառվում են պետական մարմնի կողմից՝ հանրությանը ծառայություններ մատուցելու նպատակով:
- **Այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ** – հանրային սեփականություն հանդիսացող այն ակտիվների հետ գործառնությունները, որոնք անմիջականորեն օգտագործվում/սպառվում են պետական մարմին չհանդիսացող այլ պետական կազմակերպությունների կողմից (օրինակ՝ ՊՈԱԿ-ների)՝ պետական մարմնի անունից հանրությանը ծառայություններ մատուցելու նպատակով:

1011 – «Անապահով սոցիալական խմբերին աջակցություն»

Բյուջետային ծրագրի կառուցվածքի և բաղադրիչների քննարկում

1011	Ծրագրի անվանումը՝
	Անապահով սոցիալական խմբերին աջակցություն
	Ծրագրի նպատակը՝
	Օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը
	Վերջնական արդյունքի նկարագրությունը՝
	Աղքատության մեղմում և ծայրահեղ աղքատության կրճատում

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	
11001	<i>Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում</i>
11003	<i>Համալիր սոցիալական աջակցության տարածքային կենտրոնների աշխատողների այցելության ծախսերի փոխհատուցում</i>
11004	<i>Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրություն</i>
11005	<i>Սոցիալական շտապ օգնություն</i>
12001	<i>Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ</i>


➤ **ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ 2.1:** ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՂՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

ՄԱՍ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ. ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ և ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- Բյուջետային ծրագրի մակարդակում՝
վերջնական արդյունքի չափորոշիչներ
- Բյուջետային միջոցառման մակարդակում՝
ուղղակի արդյունքի չափորոշիչներ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՇՂԹԱՆ



ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- Վերջնական արդյունքի չափորոշիչները և ցուցանիշները հանդիսանում են բյուջետային ծրագրերի նպատակների չափման, կատարողականի և արդյունավետության գնահատման հիմնական գործիքը:
- Վերջնական արդյունքի ցուցանիշները հնարավորություն են տալիս հետևելու, թե արդյոք իրագործվում է ծրագրի նպատակը և որքանով է այն իրագործվում:
- Վերջնական արդյունքի ցուցանիշները հաճախ ներկայացվում են որպես **հասարակության կյանքի պայմանների բարելավում կամ դրան նպաստող դրական փոփոխություն**:
- Վերջնական արդյունքները **լիովին վերահսկելի չեն**:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- Միևնույն նպատակին կարող են համապատասխանել մեկից ավելի վերջնական արդյունքի չափորոշիչներ:

Նպատակ՝

SՀS ենթակառուցվածքների բարելավում:

Վերջնական արդյունքի չափորոշիչներ՝

1. SՀS ոլորտի կշիռը ոչ գյուղատնտեսական ՀՆԱ-ում
2. SՀS ոլորտում զբաղվածության աճ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- **Վերջնական արդյունք**

2022 թվականին 1.2 տոկոսային կետով ավելացնել խմելու ջրի մշտապես հասանելիություն ունեցող բնակչության մասնաբաժինը

- **Վերջնական արդյունքի չափորոշիչի անվանումը**

Խմելու ջրի մշտապես հասանելիություն ունեցող բնակչության մասնաբաժին

ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- Ուղղակի արդյունքի (ոչ ֆինանսական) չափորոշիչները **անմիջականորեն նկարագրում են միջոցառումը:**
- Ուղղակի արդյունքի չափորոշիչների հիման վրա **պետք է գնահատվի տվյալ միջոցառման իրականացումը:**
- Միջոցառումների արդյունքային ցուցանիշները **վերահսկելի են**, այսինքն, պետական մարմինը կամ կազմակերպությունը, որն իրականացնում է այդ միջոցառումները, կարող է **վերահսկել դրանք և պատասխանատու է դրանց համար:**
- Ուղղակի արդյունքի չափորոշիչները սովորաբար արտահայտում են իրականացվող միջոցառման **քանակը, որակը, ժամկետը, վայրը, ծածկույթը** և այլն:

ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Քանակական
ցուցանիշներ



Չափորոշում են տրամադրվող ծառայությունների քանակը կամ ծավալը, արտահայտվում են ինչպես բացարձակ թվով, այնպես էլ տոկոսային հարաբերությամբ:

Որակական
ցուցանիշներ



Գնահատում են մատուցվող ծառայության որակը շահառուի տեսանկյունից: Ցույց է տալիս տրամադրվող ծառայության կամ ապրանքի համապատասխանությունը որոշակի ստանդարտի:

Ժամկետայնության
ցուցանիշներ



Բնութագրում են ծառայության իրականացման կամ ավարտի ժամկետը, ծառայության արդյունավետությունը՝ շահառուների կարիքներին արագ և ժամանակին արձագանքելու իմաստով:

1011 – «Անապահով սոցիալական խմբերին աջակցություն»

Բյուջետային ծրագրի արդյունքային ցուցանիշների քննարկում

ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1011	Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	
		Ծածկույթ բնակչությունից
		Ընտանեկան նպաստի տեսակարար կշիռ ԸԿԲՈՒ նպաստներում

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ծրագրի դասիչը՝	1011
Միջոցառման դասիչը՝	11001
Միջոցառման անվանումը՝	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում
Նկարագրությունը՝	Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, ընդգրկված անապահով ճանաչված ընտանիքներին նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության վճարման ծառայությունների ձեռքբերում
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում
Միջոցառումն իրականացնողի անվանումը	«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտրված կազմակերպություն
Արդյունքի չափորոշիչներ	
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թիվ, հազար	

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ծրագրի դասիչը՝	1011
Միջոցառման դասիչը՝	11003
Միջոցառման անվանումը՝	Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում
Նկարագրությունը՝	Ընդանիքի, դրա յուրաքանչյուր անդամի, սոցիալական գնահատման իրականացում՝ անապահով սոցիալական խմբերին հայտնաբերելու համար՝ սոցիալական աջակցության տարածքային մարմինների սոցիալական աշխատողների կողմից տնային այցելությունների միջոցով
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում
Միջոցառումն իրականացնողի անվանումը	«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն
Արդյունքի չափորոշիչներ	
Տունայցերի թիվ, այդ թվում	
Ընդանիքի սոցիալական գնահատման համակարգում	
Զբաղվածության պետական ծրագրերի գնահատման համակարգում	
Հաշմանդամության գնահատման համակարգում	
Տունայցի արդյունքում սոցիալական ծառայություն ստացած ընդանիքների (անձանց) թիվ	
Գնահատված կարիքների թիվ տոկոս, տունայցերի նկատմամբ	

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ծրագրի դասիչը՝	1011
Միջոցառման դասիչը՝	11004
Միջոցառման անվանումը՝	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրություն
Նկարագրությունը՝	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համապատասխան ձևաթղթերի տպագրության ծառայությունների ձեռքբերում
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում
Միջոցառումն իրականացնողի անվանումը	«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ընտրված կազմակերպություն
Արդյունքի չափորոշիչներ	
Նպաստների նշանակման համար անհրաժեշտ ձևաթղթերի քանակ, հատ	

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ծրագրի դասիչը՝	1011
Միջոցառման դասիչը՝	11005
Միջոցառման անվանումը՝	Սոցիալական շտապ օգնություն
Նկարագրությունը՝	Արագ արձագանքման ապահովում
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում
Միջոցառումն իրականացնողի անվանումը	Մասնագիտացված կազմակերպություններ
Արդյունքի չափորոշիչներ	
Ընդանիքների թիվ, հազ	

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ծրագրի դասիչը՝	1011
Միջոցառման դասիչը՝	12001
Միջոցառման անվանումը՝	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ
Նկարագրությունը՝	Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ անապահով ճանաչված ընտանիքներին նպաստի՝ սոցիալական նպաստի և հրատապ օգնության տրամադրում
Միջոցառման տեսակը՝	Տրանսֆերտների տրամադրում
Շահառուների ընտրության չափանիշները	Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքները? ընտանիքի անապահովության միավորի հիման վրա
Արդյունքի չափորոշիչներ	
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թիվ, հատ	

➤ **ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ 3.1:** ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՄՄԱՆ
ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ



CRRC
Armenia



EURASIA
PARTNERSHIP
FOUNDATION



Հրանտ Մաթևոսյան
HRANT MATEVOSSIAN FOUNDATION

Տնտեսական զարգացման և հեղափոխությունների կենտրոն

«Աղքատության նվազեցում համայնքներում. կիրառական մոտեցումներ» ծրագիր
Community Poverty Reduction “Know How” Project

«ՀԱՆՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ» *PUBLIC BUDGETS AND BUDGET PROGRAMME MONITORING*

Վերապատրաստման դասընթաց ԲՀԿ-ների համար
Օր - Առաջին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- **ՄԱՍ 4. Բյուջեարային տեղեկատվություն: Հիմնական աղբյուրներ և ներկայացվող հաշվետվությունների կառուցվածքը**
- **ՄԱՍ 5. Մասնակցային բյուջեարավորում: ՔՀԿ-ների դերը, մասնակցության հնարավորություններ և ժամկետներ**
- **ՄԱՍ 6. Բյուջեարային ծրագրերի մոնիթորինգ և գնահատում**

➤ **ՄԱՍ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

■ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ՀՀ ֆինանսների նախարարության կայք ➡ Պետական բյուջե ➡ Բյուջե

ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենք

ՀՀ կառավարության բյուջեդային ուղերձ-բացադրագիր

ՀՀ ֆինանսների նախարարության կայք ➡ Գանձապետարան ➡ Հաշվետվություններ

Պետական բյուջեի հաշվետվություններ՝ ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

■ ՀՀ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ

- **Հավելված 1 աղյուսակ 1.** Պետական բյուջեի ծախսերն ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի
- **Հավելված 1 աղյուսակ 2.** Պետական բյուջեի ծախսերն ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների
- **Հավելված 1 աղյուսակ 3.** Պետական բյուջեով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների գծով բյուջետային ծախսերի բաշխումը
- **Հավելված 1 աղյուսակ 4.** Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերը և միջոցառումները
- **Հավելված 1 աղյուսակ 5.** Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերը և միջոցառումները
- **Հավելված 1 աղյուսակ 6.** Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների համար նախատեսվող ծախսերի բացվածքը
- **Հավելված 1 աղյուսակ 7.** ՀՀ համայնքներին (այդ թվում՝ Երևան համայնքին) տրամադրվող սուբվենցիաների բաշխումը
- **Հավելված 1 աղյուսակ 8.** Սահմանամերձ բնակավայրերի գծով նախատեսված ծախսերը

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

■ ՀՀ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ

- **Հավելված 2.** Դոտացիաների բաշխումն ըստ առանձին համայնքների
- **Հավելված 3.** Արտաքին օժանդակությամբ իրականացվող ծրագրերի և միջոցառումների շրջանակներում վարկերի տրամադրմանն ուղղվող միջոցներ
- **Հավելված 4.** ՀՀ կենտրոնական բանկի վարչական ծախսեր
- **Հավելված 5.** Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման պարտադիր վճարների սահմանված չափերը
- **Հավելված 6.** Առաջնահերթությունները՝ ըստ բյուջետային գլխավոր կարգադրիչների
- **Հավելված 7.** Բնապահպանական ծրագրերի իրականացման համար համայնքներին տրամադրվող սուբվենցիաների բաշխումը

➤ **ՄԱՍ 5. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ: ՔՀԿ-ՆԵՐԻ ԴԵՐԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐ**

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ

- **ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ** իրենից ներկայացնում է քաղաքացիական հասարակության ներգրավումը համայնքային կամ պետական միջոցների բաշխմանը վերաբերող որոշումների կայացման գործընթացում:
- **Մասնակցային գործընթացներ** են համարվում բյուջետային գործընթացի շրջանակներում նախատեսված հանրային իրազեկման և հանրության հետ համագործակցության մեխանիզմների և գործընթացների ամբողջությունը:
- Մասնացային գործընթացները նպատակ ունեն քաղաքացիական **հասարակության ներգրավման միջոցով աջակցել բյուջետային որոշումների կայացմանը:**
- Մասնակցային գործընթացները պետք է բարձրացնեն **պետական մարմինների հաշվետվողականությունը քաղաքացիների առջև՝** ձևավորելով փոխադարձ վստահության մթնոլորտ:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

■ Մասնակցային գործընթացների կազմակերպման և իրականացման հիմնական սկզբունքներն են՝

- Հասանելիությունը և մատչելիությունը
- Թափանցիկությունը
- Ժամկետայնությունը
- Կայունությունը
- Փոխլրացումը
- Քննարկումները
- Հաշվետվողականությունը

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ

➤ Հասանելիությունը և մատչելիությունը

- Մասնակցային գործընթացները պետք է բավարար չափով հասանելի և մատչելի լինեն գործընթացների բոլոր մասնակիցների համար
- Գործընթացներում հնարավորինս պետք է ներառվեն բոլոր շահառուները և շահագրգիռ կողմերը
- Պետական մարմինները պետք է հեշտացնեն քաղաքացիների մասնակցությունը գործընթացներին՝
 - տարածեն ամբողջական բյուջետային տեղեկատվություն
 - կիրառեն այնպիսի ձևաչափեր և մեխանիզմներ, որոնք քաղաքացիների համար մատչելի են՝ դրանց հասկանալու, օգտագործելու և մշակելու համար:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

➤ Թափանցիկությունը

- Պետական մարմինները պետք է հանրությանը տրամադրեն ամբողջական տեղեկատվություն մասնակցային յուրաքանչյուր գործընթացի նպատակի, դրա շրջանակների, սահմանափակումների, նախատեսվող արդյունքների և ժամկետների վերաբերյալ:

➤ Ժամկետայնությունը

- Մասնակցային գործընթացները նախագծելիս, պետք է բավարար ժամանակ նախատեսվի քաղաքացիների կողմից առաջարկների ներկայացման և այդ գործընթացներում քաղաքացիների հնարավորինս վաղ փուլում ներգրավման համար:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

➤ Կայունությունը

- Բյուջետային գործընթացներում հանրության կայուն ներգրավվածությունը ապահովելու համար քաղաքացիների մասնակցությունը պետք է դրվի ինստիտուցիոնալ հիմքերի վրա:
- Մասնակցային գործընթացները պետք է լինեն պարբերական և կայուն գործընթացներ, որոնք ինտեգրված են ընդհանուր բյուջետային ցիկլում:

➤ Փոխլրացումը

- Պետական մարմինները պետք է ապահովեն քաղաքացիների մասնակցության այնպիսի մեխանիզմներ, որոնք լրացնում և բարձրացնում են կառավարման և հաշվետվողականության առկա համակարգերի արդյունավետությունը:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

➤ Քննարկումները

- Մասնակցային գործընթացները ենթադրում են հանրային քննարկումների առկայություն:
- Մասնակցային գործընթացները պետք է շահագրգռեն քաղաքացիներին ներգրավվելու բյուջետային որոշումների շուրջ իրական քննարկումներում:

➤ Հաշվետվողականություն

- Մասնակցային գործընթացները ենթադրում են հստակ հետադարձ կապ պետական մարմինների և քաղաքացիների միջև՝ հանդիպումների կամ հրապարակային տեղեկատվության միջոցով, որի շրջանակներում պետական մարմինները տեղեկատվություն պետք է տրամադրեն քաղաքացիներին վերջիններիս առաջարկների ընդունման կամ դրանց ընթացի վերաբերյալ:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

➤ Պետական մարմինները

- ՀՀ հանրային իշխանության և տարածքային կառավարման բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող բոլոր հայտատու մարմինները (այսուհետ՝ պետական մարմիններ):
- Պետական մարմինները պատասխանատու են իրենց պատասխանատվության ներքո ընդգրկված ոլորտներին կամ ծրագրերին առնչվող մասնակցային գործընթացների կազմակերպման և իրականացման համար:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

- **Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ներ)**
 - Ընդգրկում է ՀՀ-ում պաշտոնապես գործող՝
 - հասարակական կազմակերպությունները,
 - արհեստակցական միությունները,
 - մասնագիտական ասոցիացիաները,
 - կրոնական կազմակերպությունները,
 - մեդիա խմբերը,
 - հիմնադրամները և
 - քաղաքացիների այլ խմբերը, որոնք ձևավորվել են հատկապես սոցիալ-տնտեսական զարգացման, պետական ծրագրերի մոնիտորինգի և քաղաքականության շուրջ քննարկումներում ներգրավման նպատակով, և ներկայացնում են հանրության կամ շահառուների կոնկրետ խմբերի շահերը:
 - ՔՀԿ-ները հանրության կամ կոնկրետ շահառուների անունից մասնակցում են բյուջետային ծրագրերի մշակման աշխատանքներին:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

- Մասնակցային գործընթացներն ընդգրկում են հետևյալ միջոցառումները՝
 - հանրային իրազեկում,
 - բյուջետային տեղեկատվության տրամադրում,
 - բյուջետային ծրագրերի վերաբերյալ հանրության առաջարկների ներկայացում,
 - հանրային քննարկումների իրականացում,
 - հետադարձ կապի ապահովում:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

- Հանրային կառավարման հաշվետվողական մշակույթը և հանրային քաղաքականությունների և ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում հանրության տարբեր շերտերի ընդգրկման հնարավորությունների ապահովումը ենթադրում է բյուջետային տեղեկատվության մատչելիություն և լայն հասանելիություն:
- «Քաղաքացու բյուջեն» ընդունված ձևաչափ է՝ հանրությանը բյուջետային տեղեկատվությունն առավել հասանելի և հանրամատչելի դարձնելու համար:
https://minfin.am/website/images/website/byuje_amsakan/Citizen%20Budget%202020-final.pdf

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայտատու մարմինների կողմից ՀՀ ՖՆ ներկայացված 2023-2025թթ ՄԺԾԾ (ներառյալ ՀՀ 2023թ.պետական բյուջեի) հայտերի հրապարակում հայտատու մարմինների ինտերնետային կայքերում	մինչև մարտի 15, 2022թ.
Բյուջետային հայտերի շուրջ ՔՀԿ-ների հետ քննարկումների անցկացում և արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության ներկայացում ՖՆ	մինչև ապրիլի 8, 2022թ.
«Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակված տարբերակի և հանրային քննարկումների ամփոփաթերթերի տեղադրում ՀՀ ՖՆ կայքում	ՊԲ նախագիծը ԱԺ ներկայացնելու (մինչև սեպտեմբերի 30, 2022թ.) հաջորդ օրը
«Քաղաքացու Բյուջե»-ի մշակում և հանրայացում	ՊԲ մասին օրենքի հրապարակումից հետո 1 ամսյա ժամկետում

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԱԶԱՓ

Ստանդարտ ձևաչափի օրինակ

ԱՌԱՋԱՐԿ / ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կազմակերպության անվանումը՝	
Հասցեն՝	
Էլեկտրոնային փոստը՝	
Հեռախոսահամարը՝	
Պետական մարմնի անվանումը՝	
Ներկայացման ամսաթիվը՝	

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԱԶԱՓ

1. Շահառուների որ խմբի շահերն է ներկայացնում դիտողության/առաջարկի հեղինակ կազմակերպությունը՝
2. Ներկայացվածը հանդիսանում է արդյոք այլ ԲՀԿ-ների կամ կազմակերպությունների հետ համատեղ մշակված դիտողություն/առաջարկ: Եթե այո, ապա նշել այն կազմակերպությունները, որոնք մասնակցել են դրա մշակմանը:
3. Դիտողության/առաջարկի վերաբերյալ իրականացվել են արդյոք խորհրդակցություններ հիմնական շահառուների հետ՝
4. Կազմակերպությունը ենթադրում է արդյոք իր մասնակցությունը առաջարկվող ծրագրի/միջոցառման ֆինանսավորման, իրականացման կամ մոնիտորինգի գործընթացներում: Եթե այո, ապա նշել ենթադրվող մասնակցության ձևը (լրացվում է միայն նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում):
5. Նշել այն ոլորտը, բյուջետային ծրագիրը և միջոցառումը, որին առնչվում է դիտողությունը/առաջարկությունը (նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում ծրագրի կամ միջոցառման դասիչները կարող են չլրացվել):

Ոլորտը՝

Ծրագրի դասիչը և անվանումը՝

Միջոցառման դասիչը և անվանումը՝

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԱԶԱՓ

6. Նշել ներկայացված դիտողության/ առաջարկի բնույթը՝

Դիտողություն	V	Առաջարկություն	V	Նոր նախաձեռնություն	V
7. Նշել, թե ինչ հարցերի է անդրադառնում ներկայացված դիտողությունը/ առաջարկությունը (կարելի է միաժամանակ նշել մի քանի տարբերակներ)՝					
Նպատակներ	V		Ծառայության որակ		V
Գերակայություններ	V		Ծառայության մատչելիություն		V
Շահառուների շրջանակ	V		Ֆինանսական հաշվարկներ		V
Սպառվող ռեսուրսներ	V		Արդյունքային ցուցանիշներ		V
Իրականացման եղանակներ	V		Վերջնական արդյունքներ		V
Նոր ծառայություններ	V		Նոր տրանսֆորտներ		V
Նոր կապիտալ ներդրումներ	V		Արդյունավետություն		V
Այլ՝	-----				

8. Ներկայացնել դիտողության/ առաջարկի բովանդակությունը (100 բառի շրջանակներում)՝

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԱԶԱՓ

9. Ինչ օգուտներ են ակնկալվում առաջարկի իրականացման արդյունքում: Ինչպես է առաջարկի իրականացումն ազդելու թիրախային շահառուների, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների որակի վրա՝

10. Ինչ ժամանակահատվածում է նախատեսվում իրականացնել առաջարկը՝

11. Ընդհանուր գնահատականներով ինչ ռեսուրսներ (սարքավորումներ, աշխատաժամանակ, ֆինանսական միջոցներ և այլն) կպահանջվեն առաջարկի իրականացման համար՝

#	Նկարագրություն	Գումար (ՀՀ դրամ)
1		
2		
3		
	Ընդամենը	

12. Առաջարկը ենթադրում է արդյոք պետական բյուջեից բացի ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավում: Եթե այո, ապա ներկայացնել առաջարկի համաֆինանսավորման աղբյուրները, ուղղությունները և նախնական ֆինանսական գնահատականները:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԱԶԱՓ

Ամփոփաթերթի ձևաչափի օրինակ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Պետական մարմնի անվանումը՝

Ամփոփաթերթի կազմման ամսաթիվը՝

#	Դիտողության/ առաջարկի բովանդակությունը	Առնչվող ոլորտը, ծրագիրը, միջոցառումը	Դիտողության /առաջարկի հեղինակը	Դիտողության/ առաջարկի ներկայացման ամսաթիվը	Պետական մարմնի դիրքորոշումը/ արձագանքը դիտողության/ առաջարկի վերաբերյալ	Դիրքորոշման ներկայացման ամսաթիվը
1	2	3	4	5	6	7

➤ **ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ 5.1: ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ**

➤ ՄԱՍ 6. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- **Մոնիտորինգը (մշտադիտարկումը)** շարունակաբար իրականացվող գործառույթ է, որը որոշակի ցուցանիշների գծով տվյալների համակարգված հավաքագրման միջոցով ծրագրի կառավարիչներին և շահագրգիռ կողմերին տրամադրում է տեղեկություններ **ծրագրի իրականացման առաջնթացի և արդյունքների ձեռքբերման**, ինչպես նաև **ռեսուրսների օգտագործման աստիճանի** վերաբերյալ:
- **Գնահատումը** ծրագրի կամ քաղաքականության կառուցվածքի, իրականացման ընթացքի և արդյունքների համակարգային և անկողմնակալ ուսումնասիրություն-գնահատում է: Այն ուղղված է որոշելու **համապատասխանությունը և նպատակների իրագործման աստիճանը, իրականացման արդյունավետությունը, ազդեցությունը և կայունությունը**:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

■ Գնահատումը կարող է կազմակերպվել.

- ծրագրի իրականացման ընթացքում – «**Միջանկյալ գնահատում**»,
- ծրագրի իրականացման ավարտից անմիջապես հետո – «**Ավարտական գնահատում**»,
- ծրագրի ավարտից մի քանի տարի անց – «**Ազդեցության գնահատում**»:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Գնահատման գործընթացում հավաքագրված **տվյալները, վերլուծությունները և արդյունքները** պետք է հասցեագրեն կամ կիրառվեն հասկանալու համար՝
 - թիրախային խմբի կարիքները (**կարիքների գնահատում**),
 - ծրագրի հիմնավորվածությունը և, կամ տրամաբանական շրջանակը (**ծրագրի կառուցվածք/դիզայն**),
 - ծրագրի իրականացման համապատասխանությունը սահմանված խնդիրներին (**համապատասխանության գնահատում**),
 - ծրագրի/միջոցառումների իրականացման համար լավագույն հնարավոր տարբերակի կիրառումը (**արդյունավետության գնահատում**),
 - ծրագրի/միջոցառումների հանգումը կարճաժամկետ կամ միջնաժամկետ արդյունքների (**արդյունքների գնահատում**),
 - ծրագրի արդյունքում (ավարտից հետո) ձեռքբերված երկարաժամկետ և տևական փոփոխությունները (**ազդեցության գնահատում**):

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Մոնիթորինգը և գնահատումը կարող է ծառայել հետևյալ նպատակներին՝
 - Ծրագրերի իրականացման խնդիրների լուծում,
 - Կառավարության ներքին հաշվետվողականության բարելավում,
 - Հանրությանը տեղեկատվության տրամադրում,
 - Ծրագրի վերանայումներ, ձևակերպման և կառուցվածքի բարելավում,
 - Ծրագրերի համակարգում և գերակայությունների սահմանում:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Գնահատման գործիքակազմի ընտրության համար նախ պետք է դիտարկել հետևյալ **հարցադրումները**.
 - Որն է գնահատման նպատակը, գնահատման արդյունքում ստացված տեղեկատվությունը ինչ որոշումների համար է հիմք ծառայելու,
 - Ինչպիսի տվյալներ, տեղեկություններ են անհրաժեշտ տվյալ որոշումների կայացման համար,
 - Ծրագրի իրականացման որ փուլին է վերաբերելու գնահատումը (գնահատման իրականացման ժամկետը),
 - Ովքեր են գնահատման տեղեկատվություն շահառուները և օգտագործողները,
 - Ինչպիսի ֆինանսական և մարդկային ռեսուրսներ են անհրաժեշտ գնահատումն իրականացնելու համար:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Մոնիթորինգի և գնահատման **գործիքներից են**.
 - ծախսեր-օգուտներ վերլուծությունները,
 - արդյունավետության և ազդեցության գնահատումները,
 - մասնակցային արագ արձագանքման մեթոդները,
 - շահառուների շրջանում հետազոտությունները և այլն:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Ծրագրի գնահատումները, բովանդակային իմաստով, կարելի է դասակարգել երեք հիմնական խմբերի՝
 - նպատակների գնահատումներ,
 - գործընթացների գնահատումներ,
 - ազդեցության գնահատումներ:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

■ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ: Հիմնական հարցադրումներ

- Արդյո՞ք քաղաքականությունները կամ ծրագրերն ունեն հստակ նպատակներ:
- Արդյո՞ք ծրագրի ձևակերպումն այնպիսին է, որ թույլ է տալիս հասնել նպատակներին:
- Որքանո՞վ են իրագործվել ծրագրի նպատակները:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

■ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ: Հիմնական հարցադրումներ

- Որո՞նք են ծառայության մատուցման համար իրականացվող գործողությունները: Որքա՞նով են դրանք համապատասխանում արդյունքների ձեռք բերմանը:
- Արդյո՞ք այդ գործողություններն արդյունավետ են:
- Արդյո՞ք ներդրվել են համապատասխան ռեսուրսներ և համակարգեր:
- Արդյո՞ք ծրագրի շահառուները ստանում են որակյալ և ցանկալի ծառայություններ:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

■ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ: Հիմնական հարցադրումներ

- Ինչպե՞ս է փոփոխվել շահառուների բարեկեցությունը ծրագրի իրականացման արդյունքում:
- Կա՞ն արդյոք չնախատեսված ազդեցություններ՝ դրական կամ բացասական:
- Արդյո՞ք ծրագրի իրականացման ծախսերը հիմնավորված են ազդեցությունների համեմատ:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

■ Գնահատման 5 ստանդարտ չափորոշիչները.

1. Համապատասխանություն,
2. Նպատակների հասանելիություն,
3. Արդյունավետություն,
4. Ազդեցություն,
5. Կայունություն:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդյոք ծրագրով նախատեսվող նպատակները համապատասխանում են շահառուների պահանջներին, երկրի կարիքներին և քաղաքականությունների գերակայություններին

- Ծրագիրը համապատասխանում է արդյոք ռազմավարական գերակայություններին և ընթացիկ նախաձեռնություններին,
- Ծրագրի գործողությունների տրամաբանական հիմնավորվածությունը,
- Ոչ ֆինանսական ինդիկատորների համապատասխանությունը Ծրագրի նպատակին,
- Որքանով է հայտարարված նպատակը համապատասխանում շահառուների իրական կարիքներին և առկա խնդիրներին,
- Ճկունությունը, իրավիճակի փոփոխությանն արագ արձագանքելու հնարավորությունները,
- Հիմնական շահառուներին եւ թիրախային խմբերին սահմանելու որակներ, ինստիտուցիոնալ կարողությունների հետ կապված հարցեր,
- Շահառուների մասնակցությունը Ծրագրի դիզայնին և կառավարմանը,
- Ծրագրի իրատեսականությունը ֆինանսական, մարդկային և կառավարչական ռեսուրսների ներդրման իմաստով:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Վերաբերվում է ծրագրի արդյունքների և նպատակների հասանելիությանը

- Արդյոք սպասվող արդյունքները ձեռք են բերվել՝ շահառու տարբեր խմբերի համար,
- Ինչպիսին է ծրագրի առաջընթացը նպատակներին հասնելու իմաստով,
- Առկա են արդյոք կատարողական ցուցանիշներ ծրագրի նպատակներին հասնելու առաջընթացը գնահատելու համար,
- Հնարավոր է արդյոք հասնել սահմանված նպատակին սահմանված ժամկետներում և առկա ռեսուրսներով,
- Ապահովվել է արդյոք շահառուների մասնակցությունը/հետադարձ կապը ծրագրային միջոցառումներին:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Որքան արդյունավետ են ռեսուրսները փոխակերպվել սպասվող արդյունքների՝ քանակի, որակի և ժամկետների տեսանկյունից

- Կառավարման որակ և պատշաճ ընթացակարգերի ապահովում,
- Այլընտրանքային նմանատիպ ծրագրերի ծախսերի հետ համեմատական,
- Համապատասխան միջոցների և համակարգերի առկայություն,
- Արդյոք ծրագիրն իրականացվում է ըստ պլանավորվածի,
- Արդյոք ծրագրի շահառուները ստանում են սահմանված ծառայությունները,
- Արդյոք ծրագրի շահառուները բավարարված են մատուցված ծառայություններից,
- Արդյոք ծրագրի հասցեականությունն ապահովված է:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

4. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Դրական և բացասական, առաջնային և երկրորդային, կարճաժամկետ և երկարաժամկետ, սպասվող և անսպասելի, ուղղակի և անուղղակի հնարավոր ազդեցությունների գնահատում

- Ինչպիսին են ծրագրի ազդեցությունները՝ տնտեսական, սոցիալական և այլ,
- Ինչպիսի ազդեցություններ է ունեցել ծրագիրը տարբեր շահառու խմբերի վրա,
- Արդյոք ձեռք են բերվել ցանկալի ազդեցությունները,
- Ինչպիսի այլ նախատեսված և չնախատեսված ազդեցություններ են առկա,
- Ծախսերի հիմնավորվածությունը ազդեցությունների իմաստով:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

5. ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Կշարունակվեն արդյոք ծրագրի դրական արդյունքները

- Տարբեր շահառուների մասնակցությունը և սեփականության զգացումը,
- Քաղաքականությունների աջակցությունը,
- Կառավարության ինստիտուցիոնալ կարողությունները,
- Սոցիալ մշակութային գործոններ,
- Ֆինանսական կայունություն,
- Տեխնիկական գործոններ և այլն:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ